ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար պիլոտային /փորձնական/ ծրագրով ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստի/

Ք. Երևան

«05» սեպտեմբերի 2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2017թ.-ի սեպտեմբերի 05-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Գնման սույն ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Հասցեն
«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ	Ք. Երևան, Մազմանյան փ. Շ. 5/9, 74
«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ	Ք. Երևան, Դ. Անհաղթ 23/22

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հատագա գնահատման համար ընդունելի:

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի, «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

5.2 «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի /հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ/ կողմից ներկայացված հայտում գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը (**Հավելված 1**), մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունը (**Հավելված 2**), մասնակցի իրական շահառուների մասին տվյալները (**Հավելված 2.1**), որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը (**Հավելված 3**), գնային առաջարկը (**Հավելված 4**) հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն էլեկտրոնային թվային ստորագրության արտատպումը տեսանելի չէ փաստաթղթերի վրա: Տուժանքի մասին համաձայնագիրը (հայտի ապահովում) (**Հավելված 9**) կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան /կից վճարման պահանջագրում լրացված է ներկայացման ամսաթիվը, որը համաձայն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, լրացված չէ արժույթը (բառերով և կոդով) տողը, որը վերոնշյալ կարգի համաձայն պարտադիր լրացվում է վճարողի կողմից/, ինչպես նաև այն հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այլ ներկայացված է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով, 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Մասնակիցների առաջարկած գներն են՝

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Մեգապոլիս Լաբ» ԲԸ			«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ԲԸ		
		Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	3 100 000	-	**3 100 000**	2 300 000	-	**2 300 000**

7. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. սեպտեմբերի 11-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝ Գրիգոր Գաբրիելյան

Արուս Խաչատրյան